Հավելված N 4
Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
ջրային կոմիտեի նախագահի
«19» մայիս 2021 թվականի N 46-Ա հրամանի

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Ջրային կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) մոնիթորինգի և վերլուծությունների վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) Կոմիտեի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է:

2. Վարչությունը գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենքների, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի, այլ իրավական ակտերի և սույն կանոնադրության հիման վրա:

3. Վարչությունն իր կանոնադրությամբ սահմանված իրավասությունների շրջանակներում իրականացնում է Կոմիտեի խնդիրներից, իրավասությունը սահմանող իրավական ակտերից բխող, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակցությունն ապահովող գործառույթներ:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

4. Վարչության հիմնական խնդիրներն ու նպատակներն են՝

1) Կոմիտեի ռազմավարական և կազմակերպական նշանակության խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը և գնահատմանը, ինչպես նաև դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ տալու աշխատանքներին մասնակցությունը,

2) Վարչության առջև դրված գործառույթներից բխող մասնագիտական նշանակության խնդիրների բացահայտումը, ինչպես նաև դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումների և այդ աշխատանքների կատարման ապահովումը,

3) մասնակցությունը համակարգի կազմակերպությունների կողմից մատակարարված խմելու և ոռոգման ջրերի, ինչպես նաև ջրահեռացման ծավալների, կորուստների, ձևավորվող հասույթների,

էլեկտրաէներգիայի ծախսի և չափաքանակների հաստատման մեծությունների մասով ուսումնասիրությանն ու վերլուծությանը, ինչպես նաև այդ ուղղություններով և դրանց նպատակային օգտագործման հետ առնչվող այլ հարցերի վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը,

4) համակարգի կազմակերպությունների կողմից փաստացի մատակարարված խմելու և ոռոգման ջրերի, ինչպես նաև ջրահեռացման ծավալների, կորուստների, ձևավորվող հասույթների, էլեկտրաէներգիայի ծախսի մեծությունների նկատմամբ վերահսկողության իրականացումը, ինչպես նաև դրանց ուսումնասիրությունն ու վերլուծությունը, անհրաժեշտության դեպքում հաշվարկված մեծությունների վերահաշվարկման նպատակով առաջարկությունների ներկայացումը,

5) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ իր իրավասության շրջանակներում ուսումնասիրությունների, ստուգումների իրականացումը, արձանագրությունների կազմումը,

6) Կոմիտեի հաշվեկշռում գտնվող գույքի ընկերություններին կամ այլ կազմակերպություններին վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքով հանձնված տեխնիկական վիճակի և պահպանության նկատմամբ հսկողության իրականացումը.

7) ջրամատակարարման և ջրօգտագործման կանոնների պահպանման նկատմամբ հսկողության իրականացումը,

8) գարնան նախապատրաստական աշխատանքների կատարման նկատմամբ հսկողություն իրականացումը,

9) հիմնանորոգման աշխատանքների կատարման նկատմամբ հսկողություն իրականացումը,

10) կատարված ուսումնասիրությունների և ստուգումների արդյունքում վերլուծությունների և առաջարկությունների ներկայացումը՝ առկա խնդիրների առաջացման պատճառների, դրանց վերացման և հետագա բարելավման վերաբերյալ ըստ ուղղությունների, այդ թվում՝ իրավական դաշտում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու տեսանկյունից,

11) Վարչության առջև դրված ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ խնդիրներ:

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Վարչության գործառույթներն են՝

1) վերլուծում է Վարչության խնդիրների հետ առնչվող հարցերի կատարման ընթացքը,

2) ապահովում է ջրամատակարար կազմակերպությունների կողմից խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման նկատմամբ հսկողության աշխատանքները,

3) կազմակերպում է սակագնի վերանայման հայտի շրջանակում ջրամատակարարի կողմից ներկայացված ջրամատակարարման ծավալների մոնիթորինգի և վերլուծության աշխատանքները,

4) ապահովում է ոռոգման ջուր մատակարարող կազմակերպությունների կողմից մատակարարված ոռոգման ջրերի ծավալների, կորուստների ձևավորվող հասույթների ուսումնասիրության և վերլուծության աշխատանքները,

5) ապահովում է ոռոգման ջուր մատակարարող կազմակերպությունների ենթակայության տակ գործող ջրհան կայանների (պոմպակայանների և խորքային հորերի) ծախսած էլեկտրաէներգիայի մասով ուսումնասիրության և վերլուծության աշխատանքները,

6) ապահովում է ոռոգման ջուր մատակարարող կազմակերպությունների կողմից կնքված ոռոգման ջրի մատակարարման պայմանագրերի և դրանց անբաժանելի մաս հանդիսացող հավելվածներում նշված ոռոգելի հողատարածքների ուսումնասիրության և վերլուծության աշխատանքները,

7) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է ուսումնասիրություններ և ստուգումներ, ինչպես նաև մասնակցում է դրանց արդյունքում հարուցված վարչական վարույթներին,

8) ապահովում է հսկողություն ջրային համակարգերի օգտագործման և պահպանման նկատմամբ,

9) կազմակերպում է Կոմիտեի հաշվեկշռում գտնվող և ընկերություններին կամ այլ կազմակերպություններին վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքով հանձնված գույքի տեխնիկական վիճակի պահպանման նկատմամբ հսկողության աշխատանքները,

10) կազմակերպում է համակարգի և այլ ջրամատակարար կազմակերպությունների կողմից կատարվող ոռոգման համակարգերի գարնան նախապատրաստական աշխատանքների իրականացման նկատմամբ հսկողության աշխատանքները,

11) ապահովում է ոռոգման համակարգերի հիմնանորոգման աշխատանքների ծրագրի մշակման և համակարգման աշխատանքների իրականացումը.

12) կազմակերպում է ոռոգման համակարգերի հիմնանորոգման աշխատանքների կատարման նկատմամբ հսկողության աշխատանքները,

13) կազմակերպում է համակարգի կազմակերպությունների կողմից ծառայությունների մատուցման որակի բարելավմանն ուղղված վերլուծությունների և առաջարկությունների ներկայացման աշխատանքները,

14) ապահովում է հսկողության ոռոգման ջրի մատակարարման և օգտագործման կանոնների պահպանման նկատմամբ,

15) ապահովում է հսկողության խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման կանոնների պահպանման նկատմամբ,

16) կազմակերպում է ջրամատակարար կազմակերպությունների գործունեության վերաբերյալ հաշվետվությունների ուսումնասիրության և առաջարկությունների ներկայացման աշխատանքները,

17) կազմակերպում է ոռոգման և խմելու ջրի մատակարարման ոլորտում իրականացվող բարեփոխման ծրագրերի ուսումնասիրությունների և վերլուծությունների աշխատանքները,

18) ապահովում է հիդրոտեխնիկական սարքավորումների վրա տեղադրված SCADA համակարգով հագեցած ջրաչափական սարքավորումներով առցանց ստացված տվյալների ուսումնասիրության և վերլուծության աշխատանքները,

19) ապահովում է ջրաչափական սարքավորումներով չհագեցած համակարգերում ջրաչափության աշխատանքների իրականացումը,

20) կազմակերպում է ոռոգման ջուր մատակարարող կազմակերպությունների կողմից ջրի կառավարման (GIS) ծրագիր մուտքագրված տվյալների ուսումնասիրության և վերլուծության աշխատանքները,

21) կազմակերպում է համակարգի և այլ ջրամատակարար կազմակերպությունների կողմից կատարվող հիդրոտեխնիկական կառուցվածքների նախագծանախահաշվային աշխատանքների, նոր կառուցվողների, հիմնանորոգումների և ընթացիկ նորոգումների մասով մոնիթորինգի և վերլուծությունների աշխատանքները,

22) մասնակցում է համակարգի և այլ ջրամատակարար կազմակերպությունների կողմից կատարվող հիդրոտեխնիկական կառուցվածքների նախագծանախահաշվային աշխատանքների, նոր կառուցվողների, հիմնանորոգումների և ընթացիկ նորոգումների նպատակով իրականացվող գնումների գործընթացին,

23) մասնակցում է ավարտված շինարարական օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի աշխատանքներին,

24) մասնակցում է ջրամատակարար կազմակերպությունների մասնակցությամբ կազմակերպվող քննարկումներին,

25) որպես Հայաստանի Հանրապետության ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների գործունեությունը կանոնակարգող խորհրդի գործադիր մարմնի ստորաբաժանում իրականացնում է ստուգումներ և ուսումնասիրություններ:

26) կազմակերպում է քաղաքացիներից և կազմակերպություններից ստացված դիմումների, բողոքների և առաջարկությունների ուսումնասիրության աշխատանքները,

27) կատարված մոնիթորինգի և ուսումնասիրությունների արդյունքում ներկայացնում է վերլուծություններ և առաջարկություններ՝ առկա խնդիրների առաջացման պատճառների, դրանց վերացման և հետագա բարելավման ուղղություններով, այդ թվում՝ իրավական դաշտում համապատասխան փոփոխություններ և լրացումների կատարելու տեսանկյունից,

28) կատարված մոնիթորինգի, ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում կազմում է ամփոփ տեղեկանքներ՝ կատարվելիք ուսումնասիրությունների և ստուգումների պլանավորման և իրականացման նպատակով,

29) իրականացնում է Վարչության աշխատողների աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրերի վարման աշխատանքները,

30) Վարչության իրավասության շրջանակներում սահմանված կարգով Կոմիտեի ղեկավարության քննարկմանն է ներկայացնում առաջարկությունների, հրամանների նախագծեր,

31) իրականացնում է նաև չպլանավորված աշխատանքներ և այլ ընթացիկ աշխատանքներ:

IV. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ, ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ, ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

6. Վարչությունն իր գործունեությունն իրականացնում է Կոմիտեի հաստիքացուցակով նախատեսված կազմով:

7. Վարչությունը ղեկավարում է վարչության պետը:

8. Վարչության պետը հաշվետու և անմիջական ենթակա է Կոմիտեի նախագահին և անմիջական հաշվետու է Կոմիտեի գլխավոր քարտուղարին:

9. Վարչության գործունեության համակարգումը վերապահվում է Կոմիտեի գլխավոր քարտուղարին:

10. Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է վարչության պետի տեղակալը կամ գլխավոր մասնագետներից մեկը:

11. Վարչության պետի, Վարչության պետի տեղակալի, Վարչության մասնագետների գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները, շփումներն ու հաշվետվողականությունը, նրանց գործառույթներն արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքներն ու կոմպետենցիաները, կառավարման համակարգում տեղակայվածությունը սահմանվում են քաղաքացիական ծառայության համապատասխան պաշտոնների անձնագրերով: